ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

01.11.2023 թվականին կնքված N ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/9-2 ծածկագրով «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի

ք. Երևան «21» Հոկտեմբեր 2023թ.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, ի դեմս տնօրեն՝ Գ. Սարգսյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԲԵԼՄԵՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ. Միլիտոնյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 01.11.2023թ-ին կնքված N ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/9-2 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N2-ի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի 2-րդ չափաբաժնի մասով «Ժամկետը**» սյունակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացույցային օրվա ընթացքում» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ	«ԲԵԼՄԵՏ» ՍՊԸ
ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1	ՀՀ, Կոտայքի մարզ,ք. Հրազդան, Շահումյան 3
«Արարատբանկ» ԲԲԸ	«Արդշին բանկ» ՓԲԸ, Հրազդան մասնաճյուղ
Հ/Հ 15100428598301000	Հ/Հ 2476400023140000
ՀՎՀՀ 07619891	ՀՎՀՀ 03015159
Տնօրեն ____ Գ. Սարգսյան	Տնօրեն ____ Հ. Միլիտոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ